

ԱՌԱՋԻՆ
ՏԱՐԻ

ԵՄԻՆ

ԱՌԱՋԻՆ
ՏԱՐԻ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՂՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԹԱԹԵՐԹ

«ԵՄԻՆ» ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՀԱՅԱԹ ՕՐԵՐԸ

«ԵՄԻՆ» Տարեկան Կիր 10 դրան, կէս տարեկան 6 դրան: Առանձին | «ԵՄԻՆ» խմբագրութեանը բաց է տնտեսներն 8—4 ժամը: Կիրովէ
համարները 5 դրան: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, | իւր տուն Երևան 10—2 ժամը: Յայտարարութիւն բնորոշութեամբ է պահ
կիր տարեկան 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրուած են միմային | Յայտարարութիւնների համար վճարում են իրարմանկար բառին
խմբագրարան մէջ: Մկր հասցէն, Téhéran Rédaction CHAVIGH. | 1 շահի:

ԲՈՒԱԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Կրթամիջն գործը Պաշտպանի մէջ:—ՆԵՐՔԻՆ
ՏԵՄԵՆՈՒԹԻՒՆ. Հայտարարութեան լուստարութեան
միջոցներով մէկը: Նամակ Գրքերէն: Տերքին լուրեր.
ՊԵՏԱԳԻՆ ՏԵՄԵՆՈՒԹԻՒՆ. Արտասին իրերը:—
ՀԵՌԱՅԻՆՈՒԹԻՒՆ. ԲՈՒԱՅԻՆ. ՔԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ղարաղան գաւառը:

ԱՌԱՋԱՆ ԳՐՈՐԸ ՊԱՐՍԱԿԱՅԵՐԻ ԱՅՁ

II.

Մենք ցույց տուինք մեծ նախորդ ա-
ռաջնորդողով թէ պարսկահայերի մէջ
ինչ պալմանների տակ է կատարւում զին
վերին հակադրութիւնն, որ հայ հոգեւորա-
կանութիւնը պէտք է գործ դնէ դաւ-
րոցների վերայ:

Պէտք է խնայողանալ, սակայն, որ
մեր հայտարարութիւնն էլ իւր կողմից
բիւլ է նպաստում իրերի այդ բնորոշ
և անկերպարան վերակը հաւերթացնե-
լու: Գործիչներ որոնք տապնեակ տարի-
ների ընթացքում առանց որ և իցէ
լքւել պարսկահայտարարութեան տուանց
կանոնաւոր հաշուետուութեան վարել են
ազգային գործերը, ճեն ուղղւած թոյլ
տու և չէին կարողանում վարժուիլ որ
այդ ազատութեան չափ ու սահման դը-

րուէ: Այդ գործիչները լաւ կամ վատ,
ունին իրենանց կուսակիցները, և այս
կերպով որ տեղ էլ որ արդէն հայ հո-
գեւորականութիւնը դադար է գործ դը-
նել իւր հակադրութիւնը, այդ քեզ իւր-
դիր է ծագում թէ արդեք նա ոչինչ
այդ իրաւունքը, մէկ մասը պնդում է
թէ այս, միւս հասը թէ ոչ, և ահա մի
պարտաւոր պատճառ գտնութեան:

Բայց թողնելով վերին հակադրութեան
գործը, տեսնենք թէ արդեք ինքը ժո-
ղովրդը ինչպէս է սահմանում իւր ի-
րաւունքները դարձեալների կամ նոյն իսկ
եկեղեցիների վերայ:

Այս տեղ էլ դուք կը հանդիպէք մի
և նոյն անկանոն գրութեան: Ինչպէս
պէտք է ընտրել վարժարանը կառավար-
ող հոգաբարձութիւնը, ով են ընտրող-
ները, ինչ կանոնադրութեամբ պէտք է
կատարուին ընտրութիւնները, եթէ ա-
յոքին ընտրութիւններ են կատարուած,
քիւ պէտք է դիմել: Անթաղներ մի
ընկերութիւն որ կազմւում է մի վար-
ժարան հիմնելու և կառավարելու հա-
մար, արդեք այդ ընկերութիւնը բոլո-
րովին անկախ է նոյն թաղի կամ քաղա-

քի հասարակութիւնից, և իրաւունք ու-
նի ինքը իւր գլխին վարել իւր վարժա-
րանը ինչպէս որ ուզում է, ահա հար-
ցումներ որոնք դառնում են նորոշակ
վեճի և երկպառակութեան կետեր ածեն
պարսկահայ քաղաքների մէջ:

Մենք կարծում ենք որ նոյն քան որ
եւիցէ ուսումնարանական բարեփոխ
մասին մտածելը, պէտք է առանց կարգ
ու կանոն դնել այդ հաստատութեանց
կազմակերպութեան մէջ, ահա այն մի-
ջոցը որ մենք առաջարկում ենք այդ
նպատակին հասնելու համար:

Մեր նախորդ լռութեամբ արդէն ա-
սացինք որ տեղական կառավարութիւնը
հայաց կրթական գործերի մէջ միակ իրա-
ւասութեւ և պատասխանատու է համարում
մեր հոգեւոր ելնութեան վերայ: Ոգտուե-
լով այս հանգամանքից վեհափառ կա-
թողիկոսը կարող էր, որպէս մեր հոգե-
ւոր գլուխ, ի գործ դնել իւր անվիճելի
իրաւունքը, գծելով սահման և կանոնա-
դրութեան այդ բոլորի համար: Այդին
վեհափառութիւնը կարող էր յանձնել
այդպիսի կանոնադրութեան մշակումը
իւր ձեռքի տակ գտնուած ժողովներից

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԱԿԱՆ ԿՅՈՒՄՈՐ

(Դարձադան Դաւառը)

Այս բոլոր գիւղերը հայոց զարադանից Սուրբադարայ,
նորին և վերին Չաննուշիք, պատկանում են նորին
բարձրութեամբ իշխան Նայիր Սուրբադարայի որ միշտ
մի առանձին հոգաւորութիւն է ցոյց տուել իւր հայ
գիւղացիներին վերայ:

Ի հարկէ մի այսպիսի դէպքում նա սիրով կօշնէ
իւր հպատակներին. բայց զօրւարն այն է որ զա-
րադանի գիւղացիները չեն կարող մի այդպիսի
գործ յառաջացնել «աղայի» Նոտ, բայց Թէհրանի
մեր հայրենակիցները կարող են այդ գիմունը
անել, և վստահ ենք որ նորին բարձրութիւնը ան-
ուշադիր չի թողնել նոյն խնդիրը:

Նորանից առաջ ինարկէ հարկաւոր է Սրբազան
Առաջնորդին դիմել օգնութիւն խնդրելու, որը յուսով

ենք չի դիմել նորին սրբազնութեան խաւարում
մտացած իւր ժողովրդի Եզնութեան համար: Բայց
ի հարկէ չենք ուզում առել որ միջոյն այդ օգնու-
թեանց պէտք է աչք դնելով սպասել:

Զարադանից այժմ բաւական հասկացի են ուս-
ման յարգը և սիրում են վարժարաններ տեսնել ի-
րանց գիւղերում, այնպէս որ եթէ քաղաքից օգնու-
թիւն չը հասնի, ինքեանք ուսումնարան պահելու
կործակութիւն չունենալով, նոր սկսում գործը հենց
սկզբից ոչնչանալու կը դատաւարտուի: Եւ այս ի
հարկէ ապառուարի չէ կարող վիճել Թէհրանի գա-
ւազան ընկերութեանց, մենք չենք կարող թողնել
որ մեր մի տարեկան ջանքն ու ներդրութիւնը ապար-
դին անցնի: Յատկանիւ վախճում ենք որ զա-
րադանից կարծիքը բոլորովին հաստատուի այն
մասին թէ Զարադան եկող ուսուցիչները գոյիս են
որ մի «ային հանեն» իրանց գլխին, և այսուհետեւ
նորա այն եւս չը թողնեն որ և իցէ մի ուսուցիչ
էլ ոտք դնէ այս գաւառը:

Շուրի՜ Թղթակիցներից մէկը խորհուրդ է տա-
լիս Թէհրանի խնայողական սնունդի անդամներին
իրենց դրամադուրը գործածել ծնան աղջուր ու-
նենալու ծնելը հեշտացնելու Թէհրանի իւրեք: Ձայ
ընտանիքների համար եւ այդպիսով շահուիլ: Այս
մասին մենք էլ յանձն կառնենք Զարադանից ա-
կնկալուած ուսուցիչի պաշարը ածան դնով այստեղ
ծախիւ առնել և յանձնել նոյն ընկերութեան տն-
դամներին ԼԹԷ նորա կամենան իրենց տրուած այդ
խորհուրդը գործողել, որով թէ շահուած կը վիճին
եւ Թէ ջղայած նոյն ընտանիքներին:

Առ այժմ այսչափով բաւականանում եմ, խոս-
տանալով այսուհետեւ շարունակ տեղեկութիւններ
տալ ա-ս գիւղերի վիճակի մասին:

Գ. Ա. Դաւառան

թիւներէն և լեզուներէն — հայերէն, անգլիերէն, ռուսերէն և պարսկերէն — գրելաւոր տեղը յատկացրած է կրօնին, այնպէս որ դպրոցի անբաժանուող ոգին կրօնն է: Ի հարկէ մենք այդ ասելով չենք ուզում ժխտել կրօնի նշանակութիւնը մարդկային քաղաքակրթութեան մէջ, բայց մեզ աս նուազն գալթակեցողացի է երևում այն երևոյթը, որ մինչև մի քանի տարի առաջ, (մասամբ և այժմ) երևան էր գալիս այդ դպրոցի գործունէութեան մէջ: Այն շատիճանի նեղ, սահմանափակ կրօնական հայեացքներով և հոգով էին ստորոգում լինում այդ դպրոցում ընթացաւարանները, որ մարդ սրբան էլ օպտիմիստական հայեացքներով վերաբերուէ նորանց, դարձեալ կը հիասթափուէ, կը լուսահատուէ: Բոլորովին անշատուած, չէզոք դիրք, մի որոշ չափով կրօնական թիւը, ինքնահաւան գատողութիւններ, և ասելութիւն դէպի միւր գաւառութեան պատկանող իրանց ընկեր և ազգակից հայերը ահա այն գոյնը կամ պատկերը, որ անհնգում էին լոյս ասներն ու ամառահիւր: Դպրոցի մէջ քաղաքական այդ ոգուն առջիկ նպատակում էին նայն իսկ վարչութեան նախնիները իրանց բռնած ընթացքով և այդ տխուր երևոյթի պատճառները նոքա քողարկում էին այն պատուակով թէ դպրոցը լոկ մի կրօնական հիմնադրութիւն է, որի նպատակս է բրնայտնեաներ դաստիարակել:

Սակայն, անցնում են մի քանի տարիներ, լուսաւոր ժամանակի թափանցող, ամեն բան լեղաշրջող ոգին մուտք է գործում այդ դպրոցը նորանում կըրթւող սանիկների հոգու և մտքի մէջ, որ մատանում, տարբանում է նոր, թարմ, լայն գաղափարների և աշխարհահայեացքների մի ամբողջ կերպարանափոխիչ հասանք, արմատախիլ է անում այն անդից հին, փթած ինքն իրանով սնուող գաղափարները: Նորմանց գնում է ժամանակի պահանջների համդէպ: Եւ այն պատանին, որ քիչ օտաջ մի աստիկ կրօնամոլ, ամեն մի իտէալական ձգտումից զուրկ, լոկ գաւառական անձուկ մտքերով անբող արարածներ, այսօր ցոյց է տալիս մի բոլորովին նոր կերպարանք, նա ամօթ է համարում, իւր մարդկային արժանաւորութիւնն ոտնակոխուած է դիւմ, երբ գննւում է այդ չեզոք, հաստատական շարժումներին անհաղորդ դրութեան մէջ: Եւ այժմ է գգում լայն ընդարձակ սկզբունքների և հասկացքների:

Նոր ստք կոխելով լուսաւորութեան հանրամարդկային շէմքի վերայ, նա շրջում է իւր իւրացրած, փափայած, բայց զեռ ևս նարածէլ գաղափարը մարմնացնել, իւր երազն իրականացնել և նա հիմնում է մի ընկերութիւն „Լոյս“ անունով, հէնց նոյն իսկ աշակերտների շրջանում, նպատակ ունենալով օգնել իրանց տղէտ, չքուոր ազգակից եղբայրների լուսաւորութեան գործին, հէնց այդ նոյն „Լոյս“ ընկերութեան վարչութիւնըն էր ստրքել վերոյիշեալ գրական երեկոյթը և պատկերահանգեսը:

Մուտքը ձրի էր և այդ պատճառով Դպրէժի ձրիստէր հասարակութեան մի մասը ներկայ էր, եթէ գիշեր ժամանակ չը լինէր, գեաչէ անթիւ կը լինէր բաժնութիւնը: Երեկոյթին էլ, քրտկերտհանդէսն, էլ ընդհանրապէս լաւ անցան թէև չէ կարելի չը լիշել, որ շատ պատկառութիւններ էլ ունէին: Պատկերների մէջ զլիաւոր տեղն էին բռնում եկեղեցիները, Բն է նշանակում այդ, մթթէ Եւրոպայում բացի եկեղեցիներից, ուրիշ հիմնարկութիւններ չը կան: Երտատանում կտորները վատ ապաւորգլիէն թողեցին, իրանց բովանդակութեան մի քանի անմիտ, անարժէք մասերով: Պատկերների բացառութիւնները քաղուած էին անգլիերէն բողոքական թերթերից, այդ պատճառով էլ միայն Անգլիայի բողոքականի դաւանական նեղ հայեացքներն էին նոյնութեամբ լսում, գէպի այս ինչ գաւառութեան պատկանող ազգի կցմ ժողովրդի վարք ու բարքը, կըրօնեկան համոզումները ունեցած գիրքն ու մասնաւոր կարծիքները այդ բացառութիւնների հեղինակներից, այդ գիտողութիւնները կարելի է ասել, խիտ անվալել էին: Բացառութիւնների մէջ կարելի է օգտուիլ գաւառան հեղինակներից՝ մերթելով նոցա մասնաւոր, անհամական կարծիքները գէպի ուրիշ ազգերը, այն էլ կրօնական հարցերում, և վերցնել միայն բուն պատկերին կամ տեսարանին պատկանող նկարագրական մասը, միշտ խուսափելով վերաւորիչ ակնարկութիւններից:

Մենք լիայլս ենք, որ այդ նորակալմ ընկերութեան վարչութիւնը չի վերաւորել մեր նկատողութիւններից, որոնց նպատակն է մտերմաբար խորհուրդ տալ հեռանալ նրան ալգայիտի անզգուշութիւնների և ուրիշների սրբազան գգացմունքները շոշափելուց:

Ի գէպ, առաջարկում ենք յարգելի „Լոյս“ ընկերութեանը իւր նպատակներ

րի իրագործման և լաջողութեամբ համարափոքը ինչ լայնացնել իւր սկզբունքները, հեռանալ սահմանափակ հայեացքներից և արքած կարող է, մտանալ հասարակութեանը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

„Արձագանքի“ 42 թուի մէջ տպուած է մի թղթակցութիւն Թէհրանից, որի մտօնն հարկ ենք համարում մի քանի խօսք ասել: Խօսելով Բաքի ընկերութեան կազմակերպած իւր ասելով „մեծագորգ“ հանգէսի մտօնն, պարօնը զարմանալով զարմանում է ար „Եաւիլ“ իւր թիի տակ կատարուած այդ հանդէպի մասին մի բառ անելով, արտասանելով զգուշանում է: Եւ մենք զարմանալով զարմանում ենք թէ ինչպէն կարելի է այդ աստիճանի անհեթեթ լուս համարձակել դրել լրագրութեան մէջ առանց շիկնելու: Պարզենք այժմ, նամակը գրւած է մարտ 20-ին Թէհրանից իսկ „Եաւիլ“ 10 համարում մարտ 5 մի հանդիստան ստորագրութեամբ և „Ա“ արդանանց տօնի հանդէսը“ վերնագրով ամբողջ հանգէսի նկարագրութիւնը կալ, և լաջորգ օրը պ, թղթակիցը և իւր համախոհները այդ համարը հանդիսապէս եկեղեցու բակում պատաստեցին, որովհետեւ մի քննադատութիւն կար, նորա մէջ նոցա արտասանած տիրացուական ճառերի մտօնն: Իսկ „Եաւիլ“ 11 համարում մարտ 12 տպուած Գալմի նամակ նոյն նիւթի վերայ, և ներքին լուրերի բաժնում մի պատասխան Բաքի ընկերութեան այդ ինքնակոչ պաշտպաններին, որոնք զուր տեղ են ձգտում իւրեանց գատը նայնացնել Բաքի ընկերութեան գատի հետ: Մենք ցարմանում ենք թէ ինչպէս կարելի է այդ յօդուածները տպուելուց 8 օր թառլ ելնել և գրել, որ „Եաւիլը“ զգուշանում է մի բառ ասել այդ մեծագորգ հանգէսի մտօնն: Այս մէկ կէտից կարելի է գաղտփար կազմել և թղթակցութեան միւս նոյնչափ ստալօգ կէտերի մտօնն, ab uno disce omnes.

Կովկասեան լրագրների մէջ տպուած է Ահափառ Ատթուգիկոսի երկրորդ կոնդակը: Մի քանի նկատումներով միանգամայն մի դարաղլուխ է կազմում այդ կոնդակը: Ամենից առաջ մեկ նշանաւոր է երևում այն հանգամանքը, որ Հայրիկը նուիրագործում է աշխարհաբարի գործածութիւնը իւր սրբատառ կոնդակի մէջ,

և հաղորդակցութեան է մտնում իւր հօտի հետ ոչ թէ պաշտօնական, ստան, հասարակ ամբողջի համար անհասկանալի լեզուով, այլ կենդանի լեզուով և ջերմ հրապրուզի խօսքերով որոնք ցնցում են ամբողջ հայութեան սիրտը: Մենք կարծում ենք որ այդ առաջին բայն է գէպի այն անգնահատելի դարձը, որին ըստ արտաքին հայութիւնը, այն է Աւետարանի միտմտեալ թարգմանութիւնը աշխարհաբարի մէջ: Միւս կողմից կոնգրակի մէջ յայտնուած մաքբերը կապ ունին մեր ամենից նուիրական խնդիրների հետև «Շախին» բառական ծաւալ չունենալով իւր էջերը պատուելու այդ կոնգրակով, խմբագրութիւնը զննած է առանձին լաւելուածով տպել յիշեալ կոնգրակը և ուղարկել մեր յաջորդ թուի հետ մեր բոլոր ընթերցողներին:

Անցիկո կերպիսի ս. Գեորգ եկեղեցու մէջ հրապարակեալ Բաթիքի ընկերութեան նախնականութեամբ Բաթիքի հոգեհոսանքատը. շատ քիչ բազմութիւն կար շնորհիւ այն հանգամանքի որ ոչ որ տեղեկութիւն չունէր այդ մասին: Յանկարի էր որ այդպիսի դէպքերի մէջ նախապէս յայտարարութիւն տրուէր:

Ինքնագրութիւն շնորհակալութեամբ պատշաճ Արծիւ Վանդուրականի անուամբ Բաթիքի հեղինակութիւններից կեղծուած հաւաքածոյ. ուղղուած «Պարսկաստանի տէրութեան հրատարակութեան» նոյն հեղինակի Տիֆլիսը կողմից: Յանձնարարութեամբ վերջը միւր ընկերացիների: Գրքը տպուած է փայտէջի թղթի վերայ և արժուէ 70 կոպէկ. դիմել Կոմիտէի ԱՆՆԱ ԲԱԳՓԻ:

Շնորհակալութեամբ տնայանքիս պ. Մ. Փորթուգալեանի հրատարակութեամբ «Մի Պուկար Հայրի. նաւեր» վերնագրով գրքից: Գիրքը հետմիջոցներ թղթանդակութիւն ունի. դիմել է 1 թր. 40 կոպէկով դիմել «Արմենիայի» խմբագրութեան:

ՎՐԻՊԱԿ

Մեր նախորդ թուի խմբագրականի մէջ նարոյն էր մի քանի պարագրական սխալներ. սիւնակ 1 տող 17 գրուած է. Այդ վերջին հակոյութեան. միւսը է գրուած լինել «Այդ վերջին հակոյութեան»: Միւսակ 18-րդ 20. գրուած է. «Բայց գործողութիւնը պարսկական հոգեւորականութիւնը շատ պաշտօնական կերպով է վարել, մինչև այս վերջին տարիները, իւր խնամքին յանձնուած և նոյն իսկ այժմ դեռ ոչ մի կանոնաւոր հոգեւորական չի կայ»: Պէտք է գրուած լինէր. «Բայց գործողութիւնը պարսկական հոգեւորականութիւնը շատ պաշտօնական կերպով է վարել, մինչև այս վերջին տարիները, իւր խնամքին յանձնուած արտաքին և նոյն իսկ այժմ դեռ ոչ մի կանոնաւոր հոգեւորական չի կայ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԳԵՐ

«Աշակից» բառով ենք հետեւեալ բարեր: Կ. Պոլսից մեզ գրուած են տարիի 2-ից. Պատրիարքի վերջնական հրաժարած է: Սրիւն որ տուաք գրեց իր փոխանցորդին թէ ինքն ալ պատրիարք չըլլալով կը դիմէ քովը եղած բանակները: Ետո հաւանական է որ հրաժարականը ընդունուի: Սակայն Մագալուս Արմեն կը մնայ գործի վրայ: Նպատակն է ձեռնառն մէկը տեղապահ ընել երկար տակն ու ամեն գործ շարունակել ըստ ցանկացածին:

Կ. Պոլսի քաղաքներից բաղկով, մենք էլ հոգեւոր ենք, որ Վաղարշապատ վախճանուեալ է. ծերերի Յովնանիս քանանայ Խաչ կեանք: Այժմ արտասահմանի քաղաքներում կարգուած ենք, որ Կ. Պոլսի քաղաքների հաղորդածը սխալ է և Խաչ կեանք քանանայ չի եղալ:

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնադարեանը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԹՈՒՆԱԿՈՒՄ Է

„ԱՂԲԻԻՐԻ“ ՏԱՐԱՁԻՆԸ

ՆԵՐԿԱՅ ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻԻՐԻ քաժանորդագիրը առանց պրեմիաների 3ր.

ՏԱՐԱՁԻՆԸ 6 ր. և հասցեն Tiflis. Réd. „Agbiour et Taraz“.

ՈՂ ԿԱՍԵՆՈՒՄ ՍՏԱՆԸՆԸ ՊԱՏԿԵՐ ԻՐԲԵՆ ՊԵՐՄԵ, ՊԵՏԻ ԹԻԱԿԱՆԻ ԵՒ ՐԱԻԿԱՆԻ:

Խմբ. Հրատ. Տ. Նազարեան

ԿՈՐՑՐԵԼ ԵՄ

Դավրեթի ք. վիճակահաւորի տոմսերից 2 հատ № № 0265, և 0568:

Գտնողին կը վարձատրուի

Հասցէս՝ Բաշա Ալեքսանդր Յովսէփեֆնց

Դավրեթի հայոց կրթական „ՍԷՐ“ ընկերութեան ներկայ 1894 թուականի անդամակցութիւնը բացուած լինելով վարչութիւնն զիմուէ Է օտար քաղաքացի անդամներին, խնդրելով, որ շտապէն նորոգել իրանց անդամակցութիւնը և կանոնադրի փոփոխման ու նոր վարչութիւն ընտրելու մասին իրանց գիտողութիւնները ուղղելով գրուոր կերպով ընկերութեան հասցէին: Անդամակցել ցանկացողները ձայն կ'ունենան Զատիկի յետոյ կաշանալիք ընդհանուր ժողովում:

Հայոց կրթական „ՍԷՐ“ ընկերութեան վարչութիւն

Ետևով կը կալանայ հայոց կրթական „ՍԷՐ“ ընկերութեան ք. վիճակահաւորի և խաչը: Տնտեսները վաճառուած են կենդանուած այս հասցէով, Tauris (Perse) Comité d'Instruction arménienne „SER“: Թէհրանում, պ. Հայրապետ տէր Յակոբեանի մօտ (Արամեան կանտօր), իսկ Պարսկաստանի միւս հայաբնակ քաղաքներում ընկերութեան գործակալների մօտ:

Վարչութիւն հայոց կրթական „ՍԷՐ“ ընկերութեան

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ԲԱՆԴԻ ԵՒ Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ ՊԱՏԱՌ-ԲԱԺԻՊԱ

ՄԵՆԱԴԻՐ ՊԱՏԿԱՆԵՐՆԵՐԸ

Խորաքանչիւրի գիւնէ և ճանապարհաժախտով 40 կ. գուժարով ցանկացողներին գիշումն

կը լինի:

Կոմիտէ, Տարիս Տօգոմոնիւ Կամ Tiflis, Sarkis Sogomonian

Անկն տեսակ և բոլակական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱՁԻԼԻ դեղատնումը Լալկար փողոցում ԹԵՆՐԱՆՈՒՄ. տաւն բոլակական և աւելի գնողի համար, սովորական արժեքից գիշումն կը լինի: Գիշեր ժամականութիւն ևս դեղատնումը բաց է: